

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ**

**ՄԱՐԳԱՐԻՏ ԲԱԲԱՅԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ**

**ԺԷ.00.02 - «Երաժշտական արվեստ» մասնագիտությամբ  
արվեստագիտության թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՍԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ - 2017**

---

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ИСКУССТВ**

**КОСТАНДЯН НИКОЛАЙ АЛЕКСАНДРОВИЧ**

**МАРГАРИТ БАБАЯН И АРМЯНСКОЕ МУЗЫКАЛЬНОЕ  
ИСКУССТВО**

**АВТОРЕФЕРАТ**

**диссертации на соискание ученой степени  
кандидата искусствоведения по специальности  
17.00.02 – “Музыкальное искусство”**

**ЕРЕВАН – 2017**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Ասատրյան Աննա Գրիգորի**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Երնջակյան Լիլիթ Վարդգեսի**

արվեստագիտության թեկնածու  
**Տիգրանյան Մարիաննա Ալբերտի**

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Կոմիտասի անվան պետական  
կոնսերվատորիա

Պաշտպանությունը կայանալու է 2017թ. փետրվարի 23-ին ժամը 14.00-ին ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՅ-ի 016 Արվեստագիտության մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. հունվարի 23-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

**Ասատրյան Ա. Գ.**

---

Тема диссертации утверждена в Институте искусств НАН РА.

Научный руководитель - доктор искусствоведения, профессор  
**Асатрян Анна Григорьевна**

Официальные оппоненты - доктор искусствоведения, профессор  
**Ерджакян Лилит Вардгесовна**

кандидат искусствоведения  
**Тигранян Марианна Альбертовна**

Ведущая организация – Ереванская государственная консерватория им. Комитаса

Защита диссертации состоится 23-го февраля 2017г. в 14.00 часов на заседании специализированного совета 016 Искусствоведение ВАК РА, действующего в Институте искусств НАН РА (адрес: 0019, Ереван, проспект Маршала Баграмяна 24/4).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института искусств НАН РА.

Автореферат разослан 23-го января 2017г.

Ученый секретарь специализированного совета,  
доктор искусствоведения, профессор

**ԱՏԵՆԱԿՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

**Թեմայի արդիականությունը:** Նշանակալի է հայ երգչուհի (մեցցո-սոպրանո), դաշնակահարուհի, երաժշտագետ և մանկավարժ Մարգարիտ Բաբայանի (1874-1968) դերը հայ երաժշտության պատմության մեջ: Երգչուհու հարուստ ու բազմաբնույթ երգացանկն ընդգրկել է հին վարպետների, XIX դարի եվրոպական, ռուս, հայ դասականների, ինչպես և ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունները: Նա օժտված էր հարուստ ու ճկուն ձայնով, ստեղծագործության բնույթի և ոճի ճիշտ զգացողությամբ, իսկ կատարումը նուրբ էր ու զեղարվեստորեն պարզ: Ժամանակակիցների վկայությամբ. «կատարելագործութեան հասած երաժիշտ մըն է: Սօբրանօ մը որուն թէմպըը ճոխ ու անարատ է: Ան զգայուն և ճաշակի տէր անհատականութեան մը մարմնացումն է նաև»<sup>1</sup>:

Մ.Բաբայանը Եվրոպայի տաղանդաշատ երգչուհիներից էր, ով երկար տարիներ՝ 1900-ականներից մինչև 1930-ականների վերջը, հանդես է եկել բազմաթիվ համերգներով: Նա Կոլոնն-Լամուրյո համերգային ընկերության մենակատարն էր: Մ.Բաբայանն առաջինն է համերգային բեմահարթակներից հնչեցրել ֆրանսիական ժողովրդական երգերը մեծ վարպետների մշակմամբ: Նա Մ.Ռավելի՝ ձայնի ու դաշնամուրի համար 1904-ին ստեղծված նշանավոր «Հինգ հունական ժողովրդական երգերի» առաջին կատարողն էր: Ի հավելումն դրանց՝ Մ.Բաբայանի խնդրանքով Ռավելը ներդաշնակել է ու նրան ձոնել «Tripatos»-ը՝ Խիոս կղզու պարեղանակի մշակումը: Մ.Բաբայանը 1907-1908թթ. ֆրանսիական հասարակայնությանն է ներկայացրել հայկական և ռուսական երաժշտությունը: Նա հանդես է եկել թեմատիկ համերգների շարքով: 1906թ. առանձին համերգային ծրագրերով կատարել է XVII դարի գերմանական վոկալ երաժշտության բազմաթիվ նմուշներ, երկրորդ համերգով՝ Բախի աշխարհիկ կանտատները: «1908թ. երգել է X-XVI դարերի ֆրանսիական պալատական երգեր և երկրորդ թեմատիկ համերգով՝ տրուբադուրների երգերը: 1913թ. Բաբայանի հատուկ երգահանդեսներում հնչել են երեք ավելի քան հետաքրքիր թեմատիկ ստեղծագործություններ՝ կոմպոզիտոր Տունդրի կանտատները, Լուիջի Ռոսսիի օպերաները, Իտալական երաժշտությունը Ֆրանսիայում XVII դարում: 1917թ. երգել է միջնադարի նշանավոր երգահան Գիյոմ դե Մաշոյի ստեղծագործությունները: Իսկ 1919թ. Փարիզում՝ առաջինն է կատարել երիտասարդ Մուտորգսկու անտիպ երգերը: Միշտ առաջին կատարմամբ, Բաբայանը երգել է Ալգազի, Էռնեստ Բլոկի, Դե Ֆայյայի, Հարսանի, Կոմիտասի, Մուլեի, Ստրավինսկու գործերը: Ֆրանսիայում, Անգլիայում, Գերմանիայում, Բելգիայում, Իտալիայում, Իսպանիայում և այլ երկրներում տեղի ունեցած իր համերգների ընթացքում նա երգել է այն ժամանակներում լայն ճանաչում ու տարածում չստացած հեղինակների (Բոուլո, Կանտելյուրո, Դեբյուսի, Ֆորե, Վեն Սան դ'Էնդի, Մորիս Էմմանուել, Միյո, Պուլենկ, Ռուսել, Ռավել, Շմիդտ և այլք) գործերը»<sup>2</sup>: Ուսումնասիրելով տարբեր ժողովուրդների երաժշտական ֆոլկլորը, Մ.Բաբայանը դարձել է այդ ժողովրդական երգերի լավագույն մեկնաբանը: Երգչուհին հաճախ հանդես է եկել իբրև մեկնաբանն ու

<sup>1</sup> **Քուդոյան Ա.**, Տաղանդաւոր երգչուհի օր. Մ.Պապանան (իր յիսնամեայ գործունէութեան առթիւ), «Քուլիս», 1951, ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N 254:

<sup>2</sup> Տե՛ս **Բրուտյան Յ.**, Սփյուռքահայ երաժշտական մշակույթը, Երևան, 1982, էջ 324-325:

ցուցադրող Ռոլանի, Օբրիի, Լալուայի, Մասսոնի, Կալվոկորեսիի, Կոմիտասի, Չոպանյանի և այլոց երաժշտական բանախոսությունների:

Մ.Բաբայանն իր ողջ կյանքում ծառայել է հայ երգի տարածման գործին, օտարներին ծանոթացրել մեր ժողովրդի երաժշտությանը: Երգչուհու հայկական հայտագրի առիթով Լուի Լալուան գրել է. «Բաբայանն երգեց մեծ թվով երգեր իր հայկական հայտագրում: Ինձ վաղուց ծանոթ էր նրա շատ ճկուն, մեծ ձայնածավալի ու նուրբ տեմբրի ձայնը: Բայց դեռ ծանոթ չէր իր արտահայտչության զարմանալի ճշգրտությունն ու զորեղությունը՝ հատկանիշներ, որ պահեցին սրահը կախարդանքի մեջ: Նրան պարտական ենք այդ համերգից ստացած հոգեկան հաճույքի լավագույն պահերը»<sup>3</sup>:

Մ.Բաբայանը բարեկամություն է արել Կլոդ Դեբյուսիի, Մանուել դը Ֆալյայի, Պաբլո Կազալսի, Լուի Լալուայի և այլոց հետ: Այդ են վկայում ոչ միայն երգչուհու խոսքերը<sup>4</sup>, այլև նրա արխիվում պահպանվող նամակները:

Մ.Բաբայանը հմուտ մանկավարժ էր<sup>5</sup>: Նա կատարողական ու մանկավարժական գործունեությունը համատեղել է երաժշտական քննադատության հետ. Ֆրանսիական երգի վարպետների միության և Երաժշտագետների ընկերության անդամ էր, ֆրանսիական ռադիոյի պաշտոնական մեկնաբանը, աշխատակցել է «Լարուս» հանրագիտարանին:

**Թեմայի մշակվածության աստիճանը:** Հայ երաժշտագետներն իրենց հետազոտություններում անդրադարձել են Մ.Բաբայանի գործունեությանը: Այս առումով նշանակալի է Յիցիլիա Բրուտյանի վաստակը, ով հեղինակել է Մ.Բաբայանի մասին առաջին ծավալուն հոդվածը: «Սկիյուռքի հայ երաժիշտները» աշխատության մեջ նա առանձին ակնարկով ներկայացնում է Մ.Բաբայանի դիմանկարը<sup>6</sup>: Մ.Բաբայանին՝ Յ.Բրուտյանի հաջորդ անդրադարձը տեղ գտավ «Սկիյուռքահայ երաժշտական մշակույթը» աշխատության «Երաժիշտ-մանկավարժներ» պարագրաֆում<sup>7</sup>, այնուհետև՝ «Հայ երաժշտական մշակույթի աշխարհասփիռ ընծիղները» գրքում<sup>8</sup>: Մ.Բաբայանի արխիվում պահպանվել է Յիցիլիա Բրուտյանի՝ Մ.Բաբայանին 1957թ. մայիսի 27-ին հասցեագրված նամակը<sup>9</sup>:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 326:

<sup>4</sup> Տե՛ս **Մավեան Վ.**, Օր. Մարգրիտ Բաբայեանի հետ, 22-8-59, ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N 254:

<sup>5</sup> Վեց տասնյակ տարի նա դաստիարակել է երգիչների մի քանի սերունդ: Մանկավարժական աշխատանքն սկսելով դեռևս Թիֆլիսում, այնուհետև ծավալել է Փարիզում: Փարիզում նրա հիմնադրած վոկալ ստուդիան վայելել է Դեբյուսիի, Ֆորեի, Բեռնիի, Դ'Էնդիի և այլոց մշտական հովանավորությունը: 1911-ին Փարիզում նրա բացած մեներգեցողության վարժարանը 1951-ին արժանացել է համաֆրանսիական ստուգատեսի մրցանակին: Կոմիտասը Մ.Բաբայանի համար գրել է երգչական սկզբունքների «Տասը պատվիրանքները», որով առաջնորդվել է երգչուհին: Տարիներ հետո, Բաբայանը այդ փաստաթուղթը ևս ուղարկեց Հայաստան: Մ.Բաբայանի համբավը տարածվել էր աշխարհով մեկ. նրա անհամար օտարազգի աշակերտները տարել են նրա համբավը հեռու երկրներ՝ նրա տաղանդավոր սաների թվում են ամերիկացի Ուիլյամ Կիվեն, պորտուգալացի բարիտոն Ժան Սամբանոն, Արմենակ Շահմուրայանը, Իրիս Բլոյայանը... 1914-ից սկսած ամեն տարի Մ.Բաբայանի աշակերտները հանդես են եկել համերգներով, որոնք մեծ հաճույք են պատճառել ունկնդիրներին:

<sup>6</sup> Տե՛ս **Բրուտյան Յ.**, Սկիյուռքի հայ երաժիշտները, Երևան, 1968, էջ 122-132:

<sup>7</sup> Տե՛ս **Բրուտյան Յ.**, Սկիյուռքահայ երաժշտական մշակույթը, էջ 323-327:

<sup>8</sup> Տե՛ս **Բրուտյան Յ.**, Հայ երաժշտական մշակույթի աշխարհասփիռ ընծիղները, Երևան, 1996, էջ 303-305:

<sup>9</sup> Տե՛ս **Յ.Բրուտյանի նամակը՝ Մ. Բաբայանին**, ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N 75:

Մ.Բաբայանի գործունեությանն է անդրադարձել Մաթևոս Մուրադյանն իր «Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում» մենագրության մեջ<sup>10</sup>:

Ռ.Աթայանի և Մ.Բաբայանի ծավալուն նամակագրությունից տեղեկանում ենք, որ Աթայանը մտադիր է եղել գրել գրքույկ Մ.Բաբայանի գործունեության մասին, ավելին՝ ավարտել է այն: 1962թ. օգոստոսի 24-ի նամակից տեղեկանում ենք, որ նա հողված է պատրաստում Մ.Բաբայանի կյանքի և գործունեության վերաբերյալ և նրան ուղղում 6 հարց<sup>11</sup>: 1962թ. նոյեմբերի 21-ին գրված նամակում Աթայանը գրում է, որ հողվածն արդեն ավարտել է, բայց այն ծավալուն է ստացվել, ուստի անհրաժեշտ է կրճատումներ անել<sup>12</sup>: 1963թ. սեպտեմբերի 14-ի նամակում Աթայանը գրում է. «Վերջին աշխատությունս «Մարգարիտ Բաբայան» գրքույկն է, որը վերջացրել եմ, բայց դեռ տպագրության հանձնված չէ: Այս գրքույկը, որ գրել եմ Ձեզնից բերած նյութերի և կովկասահայ մամուլի նյութերի վրա, հույս ունեմ, որ եկող տարի նույնպես լույս կտեսնի»<sup>13</sup>: Սակայն, ցավոք սրտի, այդ աշխատությունն այդպես էլ չի տպագրվել: ԳԱԹ Մարգարիտ Բաբայանի ու Ռոբերտ Աթայանի արխիվներում մեր պրպտումները ոչ մի արդյունք չսովեցին, և այդ, մեր կարծիքով, չափազանց կարևոր ու արժեքավոր աշխատությունն այդպես էլ չգտնվեց: Սակայն Ռ.Աթայանի հեղինակությամբ հայկական սովետական հանրագիտարանում զետեղվեց Մ.Բաբայանի մասին հողվածը<sup>14</sup>:

Մ.Բաբայանի համերգների մասին տեղեկություններ կան Ռուզաննա Մազմանյանի «Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901-1910»<sup>15</sup> և «Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1911-1920»<sup>16</sup> աշխատություններում:

Բարձր գնահատելով Մ.Բաբայանի կյանքի և գործունեության ուսումնասիրության բնագավառում մեր երաժշտագետների կատարած աշխատանքը, որոնք այդ ուղղությամբ առաջին, խիստ կարևոր ու արժեքավոր քայլերն են, միևնույն ժամանակ չենք կարող հավաստել, որ այդ ասպարեզում ամեն ինչ ուսումնասիրված է, իսկ նյութը՝ սպառված: Նշենք ընդամենը մեկ հանգամանք՝ Մ.Բաբայանի ծննդյան թիվն ու ծննդավայրը տարբեր աղբյուրներում տարբեր է: Ըստ Յ.Բրուտյանի՝ Մ.Բաբայանը ծնվել է Ալեքսանդրապոլում 1873-ին<sup>17</sup>, ըստ Մ.Մուրադյանի՝ Թիֆլիսում, 1885-ին<sup>18</sup>, իսկ ըստ Ռ.Աթայանի՝ Գերմանիայի Գոթա քաղաքում, 1874-ին<sup>19</sup>: Այս հարցում մենք կիսում ենք Ռ.Աթայանի կարծիքը՝ հենվելով երգչուհու արխիվում մեր կողմից

<sup>10</sup> Տե՛ս **Մուրադյան Մ.**, Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում, Երևան, 1979, էջ 391-393:

<sup>11</sup> Ռ.Աթայանի 1962թ. օգոստոսի 24-ի նամակը՝ ուղղված Մ.Բաբայանին, ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N 62:

<sup>12</sup> Նույն տեղում:

<sup>13</sup> Ռ.Աթայանի 1962թ. նոյեմբերի 21-ի նամակը՝ ուղղված Մ.Բաբայանին, ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N 62:

<sup>14</sup> Ռ.Աթայանի 1963թ. սեպտեմբերի 14-ի նամակը՝ ուղղված Մ.Բաբայանին, ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N 62:

<sup>15</sup> **Աթայան Ռ.**, Բաբայան Մարգարիտ, Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 2, Երևան, 1976, էջ 187:

<sup>16</sup> **Մազմանյան Ռ.**, Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901-1910, Երևան, 2006, էջ 45 և այլն:

<sup>17</sup> **Մազմանյան Ռ.**, Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1911-1920, ձեռագիր, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի արխիվ:

<sup>18</sup> **Բրուտյան Յ.**, Հայ երաժշտական մշակույթի աշխարհասփիտ ընձիղները, էջ 303:

<sup>19</sup> **Մուրադյան Մ.**, Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում, էջ 391:

<sup>20</sup> **Աթայան Ռ.**, Բաբայան Մարգարիտ Ավետիքի, էջ 187:

հայտնաբերված «Կենսագրական նոթերում» առկա տեղեկությունների վրա: Այստեղ կարդում ենք. «Մարգարիտ Բաբայան, դուստր բժշկապետ Աւետիք Բաբայանի և տիկին Սոֆիա Բաբայանի, ծնած Գերմանիայի Gotha քաղաքում...»<sup>20</sup>:

Մինչ օրս առանձին հանգամանալի ուսումնասիրության առարկա չի դարձել Մ.Բաբայանի կատարողական և երաժշտագիտական գործունեությունը: Եվ դա այն դեպքում, որ հենց Երևանում է գտնվում երաժշտի արխիվը: ԳԱԹ Մ.Բաբայանի ֆոնդում պահպանվող հայալեզու և օտարալեզու մամուլի բազմաթիվ արձագանքների և համերգների ծրագրերի միջոցով ներկայացվում է երգչուհու համերգային գործունեությունը, նրա կատարողական կերպարը: Մ.Բաբայանը զբաղվել է երաժշտագիտական գործունեությամբ՝ գրել ու տպագրել բազում հոդվածներ, որոնք դեռևս ուսումնասիրության չեն արժանացել, մինչդեռ կարևոր են իրենց նշանակությամբ<sup>21</sup>:

Հետազոտության համար նյութ են ծառայել Մ.Բաբայանի ձեռագրերը, նրա մասին առկա երաժշտագիտական գրականությունը, ժամանակի մամուլի արձագանքները, Նամականին, հուշերն ու հոդվածները, ինչպես նաև նրա մասնակցությամբ տեղի ունեցած համերգների ծրագրերը:

**Ատենախոսության փորձաքննությունը:** Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Երաժշտության բաժնի 2016թ. դեկտեմբերի 22-ի նիստում: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են երեք միջազգային գիտաժողովներում հեղինակի կարդացած զեկուցումներում (Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական 10-րդ նստաշրջան՝ նվիրված Փանոս Թերլեմեզյանի ծննդյան 150-ամյակին, Երևան, 10-11 նոյեմբերի, 2015թ., «Կոմիտասը և միջնադարյան երաժշտական մշակույթը» միջազգային գիտաժողով, Երևան-Հաղպատ, 27-29 սեպտեմբերի, 2016թ. և Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական 11-րդ նստաշրջան՝ նվիրված ՀՀ անկախության 25-ամյակին, Երևան-Արզակյան, 30 սեպտեմբերի - 2 հոկտեմբերի, 2016թ.) և երեք գիտական հոդվածներում:

**Աշխատության կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլուխներից (Գլուխ առաջին՝ «Մարգարիտ Բաբայանի գործունեության թիֆլիսյան շրջանը», Գլուխ երկրորդ՝ «Մարգարիտ Բաբայանի գործունեության փարիզյան շրջանը» և Գլուխ երրորդ՝ «Մարգարիտ Բաբայանը և Կոմիտասը»), եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

## ԳՐՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ՄԱՐԳԱՐԻՏ ԲԱԲԱՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹԻՖԼԻՍՅԱՆ ՇՐՋԱՆԸ

Թեև թիֆլիսյան շրջանն իր տևողությամբ այնքան էլ տևական չի եղել, սակայն, այդուամենայնիվ, կարևոր նշանակություն է ունեցել Մ.Բաբայանի ստեղծագործական կյանքում: Այստեղ է նա ձևավորվել որպես երաժիշտ, այստեղ են որոշարկվել նրա գործունեության հիմնական ուղղությունները, որոնց վրա է հետագայում խարսխվել նրա գործունեության փարիզյան շրջանը:

<sup>20</sup> Կենսագրական նոթեր, հայ., ֆր., ինքն., 4 թերթ, ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N 235:

<sup>21</sup> Մ.Բաբայանը ծավալել է նաև մանկավարժական բեղմնավոր գործունեություն, որին, սակայն, մենք չենք անդրադառնում, համարելով, որ դա այլ հետազոտության նյութ է, որով պիտի զբաղվեն մանկավարժական գիտության ներկայացուցիչները:

Մ.Բաբայանը Թիֆլիսում հայտնի ընտանիքի զավակ էր: Հայրը՝ «բժշկապետ Ավետիք Բաբայանը, բնիկ այլեքսանդրապոլսի էր, ուսումն ստանում է նախ Թիֆլիսում, ապա կատարելագործվում Պետերբուրգում և Գերմանիայում»<sup>22</sup>: Բժշկապետ Ա.Բաբայանը ամբողջ Կովկասում հայտնի բժիշկ էր ու հասարակական գործիչ, առողջապահությանը և հասարակական կյանքին վերաբերող բազմաթիվ հոդվածների հեղինակ: Մայրը՝ Սոֆյա Բաբայանը (1855, Թիֆլիս-1940) մանկավարժ էր ու հասարակական գործիչ<sup>23</sup>:

Բաբայանների երեք դուստրերը կարևոր դեր կատարեցին հայ արվեստի պատմության մեջ: Ավագ դուստրը՝ Մարգարիտ Բաբայանը, ծնվել է 1874թ. դեկտեմբերի 24-ին, Գերմանիայի Գոթթա քաղաքում: Բաբայաններն այդ ժամանակ ապրում էին Գերմանիայում, որտեղ մայրն ուսանում էր մանկավարժություն:

Վաղ են ի հայտ եկել Մարգարիտի երաժշտական ունակությունները: Վեց տարեկանում արդեն կանոնավոր դաշնամուր էր նվագում: «Իր առաջին վարժապետն եղած է Թիֆլիզի երաժշտական ուսումնարանի տեսուչ պ. Իպպոլիտով-Իվանովը, այնուհետև օր. Գաբաեվան, պ. Կոնստանտին Ալիխանովը և Լիստովնիչին»<sup>24</sup>:

Մ.Բաբայանը ավարտում է Թիֆլիսի երաժշտական ուսումնարանի դաշնամուրի բաժինը, ապա կատարելագործվում Դրեզդենում. այստեղ էլ սկսում է մշակել ձայնը: Մեկ և կես տարի անց վերադառնում է Թիֆլիս, համերգներով հանդես գալիս Անդրկովկասի քաղաքներում: 1896-ին Մ.Բաբայանն առանձին զբոսով հրատարակում է Վ.Վիլդերի «Լյուդվիգ վան Բեթհովեն» աշխատության հայերեն վերապատումը<sup>25</sup>, աշխատակցում մամուլին: Ապա մեկնում է Փարիզ՝ երեք տարի Պոլինա Վիարդոյի և Արտո դը Պադիլլայի մոտ ձայնը մշակելուց հետո վերադառնում է Թիֆլիս և հրավիրվում Թիֆլիսի երաժշտական ուսումնարանի իբրև երգի դասատու. 1901-ից մեներգեցողություն է դասավանդել Թիֆլիսի երաժշտական ուսումնարանում: 1904-ին ընտանիքով մշտապես բնակություն է հաստատել Փարիզում, հանդես եկել համերգներով ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ եվրոպական այլ երկրներում:

Բաբայանների միջնեկ դուստրը՝ Արմինա (Արմենուհի) Քարբոնե-Բաբայանը, (1876, Վիեննա – 1971, Փարիզ), նկարչուհի էր: Մասնագիտական կրթությունը ստացել էր Թիֆլիսում, ապա՝ Դրեզդենում, իսկ ավելի ուշ հաստատվել Փարիզում, սովորել Ժուլիան ակադեմիայում: 1926, 1928 և 1931 թվականներին Ա.Բաբայանն անհատական ցուցահանդեսներ է ունեցել Փարիզում: Ինչպես նկատել է Արարատ Աղասյանը՝ «Ֆրանսահայ կերպարվեստի պատմության մեջ Արմինա Բաբայանի զբաղեցրած տեղն առանձնանում է թելուզ հենց այն պատճառով, որ նա գեղեցիկ արվեստների այդ ասպարեզում լայն ճանաչման արժանացած առաջին կին նկարչուհին էր,

<sup>22</sup> Բրուսյան Ց., Մարգարիտ Բաբայան, Սիյուռքի հայ երաժիշտները, էջ 122:

<sup>23</sup> Տեղի գիմնազիան ավարտելուց հետո Մ.Բաբայանը սովորել է Գերմանիայի Գոթթա քաղաքի Մանկապարտիզպանուհիների և ուսուցչուհիների սեմինարիայում (1874), կատարելագործվել Վիեննայում: 1877-ին Թիֆլիսում հիմնել է ընտանեկան մանկապարտեզ: 1880-ին ամուսնու մասնակցությամբ ստեղծել է Ֆրեդրեյան ընկերությունը, որը 1882թ. մայիսի 14-ին Թիֆլիսում բացել է հայկական առաջին ժողովրդական մանկապարտեզը:

<sup>24</sup> Կենսագրական նոթեր, հայ., ֆր., ինքն., 4 թերթ, ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N 235:

<sup>25</sup> Տե՛ս **Berberis L.**, Մատենադասարան, «Արձագանք», 17 մայիսի 1896:

որին Փարիզում հրատարակվող «Անահիտ» հանդեսի խմբագիր Արշակ Չոպանյանը բնութագրել է իբրև «խորաթափանց նկարչուհի», «Փարիզի ամենանուրբ ու ազնվական արվեստագիտուհիներեն մինը»<sup>26</sup>:

Բաբայանների կրտսեր դուստրը դաշնակահարուհի Շուշանիկ Լալուա-Բաբայանն էր (1897, Թիֆլիս – 1952, Փարիզ): 1886-ին նա ընդունվել է Թիֆլիսի երաժշտական ուսումնարանը, աշակերտել Մ.Զ.Գաբանային: 1904-ից մշտապես բնակվել է Փարիզում, կատարելագործվել Վանդա Լանդոլսկայի մոտ, զբաղվել մանկավարժական աշխատանքով, հանդես եկել հատկապես հայկական դաշնամուրային ստեղծագործությունների կատարումով:

### 1.1. Համերգային գործունեությունը

Մ.Բաբայանի համերգային գործունեությունը սկիզբ է առել դեռևս Թիֆլիսի երաժշտական ուսումնարանում ուսումնառության տարիներից: Այդ են վկայում 1885-1886 և 1886-1887 ուսումնական տարիներին Թիֆլիսի երաժշտական ուսումնարանի սաների մասնակցությամբ հանդեսների ծրագրերը, որոնք գտնվում է ԳԱԹ Մ.Բաբայանի արխիվում<sup>27</sup>:

Մ.Բաբայանի արխիվային վավերագրերի հիման վրա ուրվագծվել է դաշնակահարուհու և երգչուհու համերգային գործունեության պատկերը:

### 1.2. Երաժշտական-քննադատական գործունեությունը

Թիֆլիսում Մ.Բաբայանը բազմիցս հանդես է եկել մամուլում՝ համերգների վերաբերյալ գրախոսականներով: Տակավին երիտասարդ տարիքում նա եղել է երաժշտական քննադատ «Արձագանքում» և «Մշակում»՝ հանդես գալով **Բաբայան Մարգարիտ, Մարգ. Բ., Օր. Մարգարիտն Բ.** ստորագրություններով, ինչպես նաև ռուսաց «Кавказ» և «Новое обозрение» թերթերում՝ **Էնվէ** ծածկանունով: 1895-ից սկսած նա երաժշտական-քննադատական հոդվածներ է գրել հայ և օտար երաժիշտների՝ Անջելլո Մագինիի, Արվեդ Պորտենի, Սոֆյա Մետների, Ռեգեր քույրերի, Նադեժդա Պապայանի, Բեգլար Ամիրջանյանի և շատ շատերի մասին:

Այսպես՝ երիտասարդ Բեգլար Ամիրջանյանի (1868-1935) թիֆլիսյան համերգներից մեկի վերաբերյալ իր հոդվածում խորաթափանց երաժշտական քննադատը գրում է. «Գուշակում ենք պ. Ամիրջանին շատ փայլուն ապագայ, որովհետև այժմ նա ունի բոլոր յատկությունները ընտիր և առաջնակարգ երգիչ լինելու, մանաանդ թե՛ որ միշտ եռանդով շարունակի, թե՛ իր ծայնը աւելի մշակելու ու զարգացնելու, թե՛ իր երաժշտական ճաշակը աւելի ևս նրբացնելու ու զարգացնելու և շատ չյաւիշտակուի այն յաջողութեանը, որ նրան անկասկած ամենուրեք կուղեկցի»<sup>28</sup>: Հետաքրքրական է, որ այս համերգի մասին որևէ հիշատակություն չկա Ամիրջանի մասին առկա երաժշտագիտական գրականության մեջ, և միակ փաստը Մ.Բաբայանի հոդվածն է:

Մ.Բաբայանի երաժշտական-քննադատական գործունեության կարևոր մասն են թիֆլիսյան «Արձագանք» պարբերականում 1895-1896թթ. տպագրված հոդվածները: «Արձագանք»-ում 1895-ին տպագրված ռեցենզիաների ուսումնասիրության շնորհիվ ստեղծվում է 19-րդ դարավերջին, ավելի ստույգ՝ 1895-ին, Թիֆլիսում տիրող երաժշտական մթնոլորտը: Մինևույն

<sup>26</sup> Աղայան Ա., Արմինիա Բաբայան՝ Էժեն Կարյերի հայ աշակերտուհին, Հայ-ֆրանսիական պատմամշակութային առնչություններ, VII միջազգային գիտաժողովի նյութեր, «20-րդ դարի Ֆրանսիան և հայերը», Երևան, 20 և 22 սեպտեմբերի, 2000, Երևան, 2001, էջ 256:

<sup>27</sup> Տե՛ս Ծրագրեր, 1885-1886, 1886-1887 ուս.տարիների հանդեսների, ԳԱԹ, Մ.Բ.ֆ., N1, 3թ.,

<sup>28</sup> Օր. Մ.Բ., Պ.Բեգլար Ամիրջանի նուագահանդէսը, ԳԱԹ, Մ.Բ.ֆ., N 234-1:

ժամանակ՝ պատկերացում ենք ստանում, թե ռուս և արևմտաեվրոպական որ կոմպոզիտորների ստեղծագործություններն են կատարվել Թիֆլիսում, աշխարհահռչակ որ արտիստներ են հյուրախաղերով հանդես եկել այստեղ:

ժամանակավորապես դառնալով նշված ժամանակահատվածի երաժշտական կյանքի տարեգիրը՝ Մ.Բաբայանը մեզ պատկերացում է տալիս Թիֆլիսի երաժիշտների կատարողական վարպետության, ինչպես նաև գեղարվեստական ճաշակի մասին: Մ.Բաբայանի ռեցենզիաները օբյեկտիվ են, և նա սկզբունքային դիրքերից հաճախ արտահայտում է նաև իր քննադատական վերաբերմունքը:

## **ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ**

### **ՄԱՐԳԱՐԻՏ ԲԱԲԱՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՓԱՐԻԶՅԱՆ ՇՐՋԱՆԸ**

1904-ին Մ.Բաբայանն ընտանիքով տեղափոխվում է Փարիզ և մշտական բնակություն հաստատում այնտեղ: Փարիզում Մ.Բաբայանը հիմնադրելու էր վոկալի դպրոց՝ ծավալելով իր մանկավարժական գործունեությունը, իսկ Եվրոպայում ծավալած համերգային գործունեությամբ ու ֆրանսիական մամուլում հրատարակած երաժշտագիտական հոդվածներով նպաստելու էր հայ երաժշտության համաշխարհային ճանաչմանը:

#### **2.1. Համերգային գործունեությունը**

1905թ. հունիսի 17-ին Արշակ Չոպանյանը Փարիզում «Ժողովրդական կանախարանում» հանդես է գալիս Հայ ժողովրդական բանաստեղծության վերաբերյալ դասախոսությամբ՝ «բազմաթիւ ընթերցումներով հայ աշուղական բանաստեղծութեանց եւ ժողովրդական երգերու ֆրանսերէն թարգմանութիւններու»<sup>29</sup>: Հայ արվեստի այդ փոքրիկ երեկոյթին մասնակցելու էին հրավիրված Մարգարիտ և Շուշիկ Բաբայանները: Մ.Բաբայանը հանդես է գալիս մի քանի ժողովրդական երգերի կատարումներով<sup>30</sup>: Սա Մ.Բաբայանի առաջին համերգն էր Փարիզում, որը մեծ հաջողություն ունեցավ:

Փարիզում իր ակտիվ գործունեությունն էր ծավալում երաժշտագետ Միշել Դիմիտրի Կալվոկորեսսին: Եվ ահա 1905թ. դեկտեմբերի 11-ին Փարիզում տեղի է ունենում Կալվոկորեսսիի “Musique Russe” («Ռուսական երաժշտություն») դասախոսություն-համերգը՝ Մ.Բաբայանի մասնակցությամբ: Համերգը սկսվում է Մ.Բաբայանի կատարմամբ՝ փարիզյան ունկնդրին նա ներկայանում է Դարգումիժսկու «Ջրահարսը» օպերայից Ջրահարսի արիայով, ապա կատարում Ռիմսկի-Կորսակովի «Հրեական երգը», Լյապունովի «Մեղեդին» և Ակիմենկոյի «Մեղեդին»<sup>31</sup>: Կալվոկորեսսիի և Մ.Բաբայանի համագործակցությունը դառնում է շարունակական: 1906թ. ապրիլի 28-ին տեղի է ունենում Կալվոկորեսսիի “La Musique Populaire de la Grèce” դասախոսություն-համերգը, որի ընթացքում հունական երգերի կատարմամբ հանդես է գալիս Մ.Բաբայանը, ընդ որում դրանց մի մասը կատարում է Մ.Ռավելի ներդաշնակմամբ<sup>32</sup>: Մ.Բաբայանը դառնում է Ռավելի «հինգ հունական ժողովրդական երգերի» առաջին կատարողը:

Համերգներով Փարիզում, Ֆրանսիայի այլ քաղաքներում, Լոնդոնում և Շվեյցարիայում հանդես եկած երգչուհու կատարողական գործունեությունն ուներ մի քանի ուղղություններ, որոնցից կարևորագույններից էր կատարումը

<sup>29</sup> Հայկական երեկոյթ մը, «Անահիտ», 1905, հունիս, N 5, էջ 140:

<sup>30</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>31</sup> Տե՛ս Ծրագիր, ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N7, 1թ.,

<sup>32</sup> Տե՛ս Ծրագիր, ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N8, 7թ.,

հին վարպետների մոռացված ստեղծագործությունների, որոնք հայտնաբերվում էին հին ձեռագրերում, ինչպես նաև տարբեր ժողովուրդների ժողովրդական երգերի մեկնաբանումը: Համերգների ընթացքում Մ.Բաբայանը կատարել է ֆրանսիական հին երգեր, հունական, հրեական, իսպանական, ռուսական և հայ ժողովրդական երգեր, որոնք բոլորն էլ երգել է բնագրի լեզվով:

Ի պատիվ իսպանացի գրող Պալասիո Վալդեսի՝ 1930թ. օգոստոսի 17-ին Կապրետոնում տեղի ունեցած ֆրանկո-իսպանական տոնախմբությանը մասնակցել է Մ.Բաբայանը՝ երգել իսպանական և բասկերի ժողովրդական երգեր՝ արժանանալով ջերմ ընդունելության: Այս նա հրավիրվել է մասնակցելու «ժողովրդական արվեստների հինգերորդ Բասկերի համաժողովին», որը տեղի է ունեցել Իսպանիայի Վերկարա քաղաքում օգոստոսի 31-ից սեպտեմբերի 8-ը, որտեղ «երգեց պասք ժողովրդական երգեր զոր գրի առած եւ դաշնակած է Հ.Տոնասթիա, Պասքերու Կոմիտաս Վարդապետը»<sup>33</sup>:

Ռուս սիմվոլիստ-բանաստեղծ Կոնստանտին Բալմոնտը (1867-1942) երգչուհուն հասցեագրած իր 1930թ. սեպտեմբերի 26-ի նամակում, արտահայտելով իր հիացմունքը Մ.Բաբայանի՝ բայոնյան համերգի կապակցությամբ, գրում է. «Дорогая и чтимая Маргарита Аветовна, У меня к Вам большая просьба. Ваш дивный концерт<sup>34</sup>, этот праздник песни и души, не уходит из моей памяти. Анна Николаевна расскажет Вам о нашем восхищении. Мы напрасно, однако, искали отзывы о Вас в байонских газетах. Так пусть русские газеты услышат о Вас слово.»: Այնուհետև բանաստեղծը խնդրում է, որպեսզի երգչուհին իրեն ուղարկի՝ «1) программу Вашего выступления, 2) текст Армянских песен Русскими буквами и русский перевод их, 3) текст пропетых Русских песен и песен Басков»<sup>35</sup>, որպեսզի ինքը հոդված գրի նրա մասին: Բալմոնտի հաջորդ՝ 1931թ. ապրիլի 17-ի նամակից տեղեկանում ենք, որ նա արդեն գրել է երգչուհու մասին հոդվածը. «Я все жду, когда наконец “Последние новости” напечатают мой очерк о Вас, но они медлят, а на письма мои не отвечают. С ними это бывает, и живя здесь, я с ними ничего поделаться не могу. Конечно, этот очерк с удовольствием напечатали бы в “России и Славянстве”, но, надеюсь, что „Последние новости“ до нашего вечера его напечатают»<sup>36</sup>. Այնուհետև բանաստեղծը ցանկություն է հայտնում, որպեսզի իր ակնարկը թարգմանվի իսպաներեն ու ֆրանսերեն: Տավոք, Բալմոնտի այդ ակնարկն այդպես էլ չի տպագրվում «Последние новости» թերթում: Ապրիլի 24-ի նամակում Բալմոնտը ցավով գրում է, որ թերթն առանց հիմնավոր բացատրությունների մերժել է տպագրել այն, և Բաբայանին է ուղարկում իր ակնարկը<sup>37</sup>: Բալմոնտի «День золотой рыбки (Маргарита Аветовна Бабаан)» վերնագրով ակնարկը տպագրվում է «Россия и Славянство» թերթի 1931թ. մայիսի 2-ի համարում: Իսկ մինչ այդ՝ բանաստեղծը երգչուհուն էր ծնել 1931թ. փետրվարի 19-ին գրած իր բանաստեղծությունը՝ «Певнице пленительной

<sup>33</sup> Օրհորդ Մարգարիտ Բաբայան. - Տիկին Ռոզ Պատմագրեան, «Անահիտ», ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N 256:

<sup>34</sup> Խոսքն, ամենայն հավանականությամբ, 1930թ. սեպտեմբերի 16-ին իսպանական Բայոն քաղաքում տեղի ունեցած համերգի մասին է:

<sup>35</sup> Տե՛ս՝ ս. Կ. Բալմոնտի՝ 1930թ. սեպտեմբերի 26-ի նամակը Մ. Բաբայանին, ԳԱԹ, Մ. Բ. Ֆ., N 70:

<sup>36</sup> Տե՛ս՝ ս. Կ. Բալմոնտի՝ 1931թ. ապրիլի 17-ի նամակը Մ. Բաբայանին, ԳԱԹ, Մ. Բ. Ֆ., N 70:

<sup>37</sup> Տե՛ս՝ ս. Կ. Բալմոնտի՝ 1931թ. ապրիլի 24-ի նամակը Մ. Բաբայանին, ԳԱԹ, Մ. Բ. Ֆ., N 70:

Маргарит Бабаян“ վերնագրով<sup>38</sup>, որը խնամքով պահպանել է երգչուհին, և որը տպագրվել է “Россия и Славянство“ թերթի 1931թ. մայիսի 2-ի համարում:

Հայաստանի ընթերցողին նույնպես հասան Մ.Բաբայանին հասցեագրված Բալմոնտի նամակներն ու ակնարկը՝ «Լրաբերի» 1991թ. առաջին համարում Ա.Զաքարյանը “К.Бальмонт и М.Бабаян» հոդվածում տպագրում է Բալմոնտների նամակները՝ հասցեագրված Մ.Բաբայանին, ինչպես նաև “День золотой рыбки (Маргарита Аветовна Бабаян)” ակնարկը<sup>39</sup>:

## **2.2. Երաժշտական-քննադատական գործունեությունը**

Փարիզյան շրջանում ևս Մ.Բաբայանը շարունակել է երաժշտական-քննադատական գործունեությունը: Նրա հոդվածները տպագրվել են «Լը Մոնդ Մուզիքալ», «Ռեյու Մուզիքալ», «Քուրիեր Մուզիքալ», ինչպես նաև «Յառաջ», «Ապագայ», «Ազդարար», «Քուլիս», «Մշակոյթ», «Այսօր», «Անահիտ» և այլ թերթերում ու հանդեսներում: Օրգանապես ներգրավվելով փարիզյան երաժշտական կյանքի մեջ՝ մինչույն ժամանակ Մ.Բաբայանը ամուր կապեր էր պահպանում Խորհրդային Հայաստանի և նրա երաժշտական գործիչների հետ, հետաքրքրվում նրանց ստեղծագործությամբ և գործունեությամբ, նպաստում Ֆրանսիայում նրանց ստեղծագործությունների կատարմանն ու տարածմանը: Մ.Բաբայանն արձագանքում է Հայաստանի երաժշտական կյանքի անցուղարձին: 1963-ին լույս է տեսնում Ռ.Աթայանի «Գուսան Հավասի (Կյանքը և ստեղծագործությունը)» աշխատությունը: Երաժշտագետն անդրադառնում է այդ աշխատությանը. «Երեսնի յայտնի երաժիշտ,- գրում է Մ.Բաբայանը,- եւ երաժշտագէտ Ռոբերտ Աթայան մի շատ արժեքատուր նոր աշխատութիւն պատրաստած է Աշուղ Ասաի գուսանի կեանքի եւ գործունէութեան մասին»<sup>40</sup>:

Ռուբեն Զարյանի և Մաթևոս Մուրադյանի՝ 1955թ. փետրվարին գրված նամակից տեղեկանում ենք, որ Մ.Բաբայանը ցանկություն է հայտնել տեղեկություններ ստանալ Սովետական Հայաստանի կոմպոզիտորների մասին և նմուշներ նրանց ստեղծագործություններից: ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Արվեստների պատմության և տեսության սեկտորը հաճույքով կատարում է նրա ցանկությունը և ուղարկում նրան հետաքրքրող տեղեկություններն ու նոտային հրատարակությունների նմուշները<sup>41</sup>:

Նամակին կցված «Կենսագրական համառոտ տեղեկություններ Սովետական Հայաստանի մի քանի կոմպոզիտորների մասին» տեղեկանքում ներկայացված են Առնո Բաբաջանյանի, Ալեքսանդր Հարությունյանի, Գրիգոր Եղիպարյանի, Կարո Զաքարյանի, Աշոտ Մաթյանի, Հարո Ստեփանյանի, Վարդգես Տալյանի, Անուշավան Տեր-Ղևոնդյանի, Արմեն Տիգրանյանի և Արամ Խաչատրյանի մասին համառոտ կենսագրական տեղեկություններ<sup>42</sup>:

<sup>38</sup> Տե՛ս ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N 239:

<sup>39</sup> **Закарян А.А.**, К.Бальмонт и М.Бабаян, Լրաբեր հասարակական գիտությունների, 1991, 1, էջ 161-168:

<sup>40</sup> **Բաբայան Մ.**, Աշուղ Ասաի, «Յառաջ», 27 մարտի 1963:

<sup>41</sup> Տե՛ս Ռուբեն Զարյանի նամակը՝ ուղղված Մ.Բաբայանին, ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N 83, մեքենագիր 2 թերթ:

<sup>42</sup> Կենսագրական համառոտ տեղեկություններ Սովետական Հայաստանի մի քանի կոմպոզիտորների մասին, մեքենագիր 10 թերթ, ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N 83: Նամակի հետ Մ.Բաբայանին են ուղարկվել Կոմիտասի «Ազգագրական ժողովածուի» երկրորդ հատորը, Ալ.Սպենդիարյանի երկերի լիակատար ժողովածուի 3-րդ, 4-րդ և 9-րդ հատորները, «Ռուսական և ուկրաինական երգերը», Ռ.Մելիքյանի «Զառ-վառը», Սպ.Մելիքյանի «Հայ ժողովրդական երգեր և պարեր»-ի 1-ին և 2-րդ հատորները, Ա.Տեր-Ղևոնդյանի «Պարային սյուիտը» (պարտիտուր), Ս.Բաղդասարյանի Սյուիտը «Անուշ» սիմֆոնիկ

Մ.Բաբայանի արխիվում ծրար 261-ում պահպանվել են նրա գրառումները՝ Համբարձում Լիմոնճյանի, Եղիա Տնտեսյանի, Նիկողայոս Թաշճյանի, Տիգրան Չուխաճյանի, Արմեն Տիգրակյանի, Ալեքսանդր Սպենդիարյանի, Արամ Խաչատրյանի, Հարո Ստեփանյանի, Ալեքսանդր Հարությունյանի, Գոհարիկ Ղազարոսյանի, Ալան Հովհաննեսի, Ալեմշահի մասին՝ հայերեն և ֆրանսերեն ձեռագրերը<sup>43</sup>:

### **2.2.1. Մարգարիտ Բաբայանը՝ Անոն Բաբաջանյանի մասին**

Մ.Բաբայանը հետաքրքրվել է երիտասարդ կոմպոզիտորի ստեղծագործությամբ: Այդ է վկայում Մ.Բաբայանի արխիվում գտնվող նրան հասցեագրված Ա.Բաբաջանյանի նամակը<sup>44</sup>: Մ.Բաբայանը ծանոթ է եղել կոմպոզիտորի ստեղծագործությանը և շատ բարձր գնահատել այն: «Հիացմունքս անհուն է եւ քանի անելի ուսումնասիրեմ՝ այնքան մեծանում է տպաւորութիւնս,- գրում է Մ.Բաբայանը՝ ծանոթանալով Բաբաջանյանի «Պրեյլուդին», «Վաղարշապատի պարին», «Էքսպրումտին» և «Կապրիչիոյին»,- Բաբաջանեանը ոչ միայն երգահան, այլև ստեղծագործ է ինքնորոյն, հարուստ ներքին բովանդակութեամբ»<sup>45</sup>: Հավարտ հոդվածի՝ երաժշտագետը գրում է. «Մաղթենք, որ հանգամանքները թոյլ տան մեզի լսելու այս տաղանդաւոր, մեծ ապագայ խոստացող երաժշտին եւ ծանոթանալու իր նոր գործերին հետ»<sup>46</sup>:

### **2.2.2. Մարգարիտ Բաբայանը՝ Արմենակ Շահմուրադյանի մասին**

1904-ին Փարիզ է ժամանում Կոմիտասի ճեմարանական սան՝ տենոր Արմենակ Շահմուրադյանը (1878-1939): Հետագայում Ա.Շահմուրադյանն ու Մ.Բաբայանը հաճախ են հանդես եկել Կոմիտասի կազմակերպած համերգներին՝ զգալիորեն ապահովելով դրանց հաջողությունը: Ավելին՝ Մ.Բաբայանը համարվել է «Արմենակի քոյր-ընկերակցուհին նրա ուսումնական և արտիստական կյանքի գրեթե բոլոր փուլերում»<sup>47</sup>:

ԳԱԹ Մ.Բաբայանի դիվանում ուսումնասիրություններ կատարելիս մեր կողմից հայտնաբերվեց մի ձեռագիր, որը մինչ այժմ անծանոթ է հայ երաժշտագիտությանը: Մ.Բաբայանի ֆոնդի N 231-ում խնամքով պահվում են նրա հուշերը Արմենակ Շահմուրադյանի մասին՝ նրա զեկուցումը երգչի հետմահու հրեյանի կապակցությամբ<sup>48</sup>: Այս հուշերը դուրս են մնացել Ա.Շահմուրադյանի կյանքն ու ստեղծագործությունն ուսումնասիրողների տեսադաշտից: Այդ զեկուցման մասին հիշատակություն անգամ չկա երգչին վերաբերող մեզ հայտնի գրականության մեջ: Մեր կարծիքով, սակայն,

---

պոեմից, Ա.Բաբաջանյանի «Հերոսական բալլադը» (պարտիտուր) և «Չորս պիես» դաշնամուրի համար, Ա.Հարությունյանի «Տոնական նախերգանքը» (պարտիտուր), Կոնցերտինոն դաշնամուրի համար և «Պարալին սյուիտը (պարտիտուր), Գ.Եղիազարյանի «Հայաստան» սիմֆոնիկ պոեմը (պարտիտուր), Թ.Այթունյանի «Հայկական ժողովրդական երգեր և պարերը», Ա.Սաթյանի Արարատյան հովտի երգերը, Գ.Չեքոստրյանի Պրեյլուդները, Մ.Գասպարյանի և Մ.Մուրադյանի «Սովետական Հայաստանի երաժշտական կուլտուրան» և Ա.Տիգրանյանի «Անուշը» (Տե՛ս Յուցակ Փարիզ, օրիորդ Մ.Բաբայանին ուղարկող գրականության, մեքենագիր 1 թերթ, ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N 83):

<sup>43</sup> Տե՛ս ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N 261:

<sup>44</sup> Անոն Բաբաջանյանի նամակը Մ.Բաբայանին, անթվակիր, մեքենագիր 3 թերթ, ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N 68:

<sup>45</sup> **Բաբայան Մ.**, Անոն Բաբաջանեան, ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N 234-1:

<sup>46</sup> Նույն տեղում:

<sup>47</sup> **Համբարյան Ռ.**, Սոխակ Տարոնա, վավերագրական վիպակ, Երևան, 2001, էջ 225:

<sup>48</sup> Տե՛ս Հուշեր Ա.Շահմուրադյանի մասին, զեկուցում Շահմուրադյանի հետմահու հրեյանի առթիվ, ինքն. 7 թերթ (4 փաթեթ), ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N 231:

Մ.Բաբայանի այս զեկուցումը կարդացվել է ոչ թե Ա.Շահմուրադյանի հետմահու հորեղանի ժամանակ, ինչպես նշված է Բաբայանի դիվանում, այլ 1939 թվականի մայիսի 7-ին տեղի ունեցած նրա հորեղանական հանդիսության ընթացքում:

Ա.Շահմուրադյանի հորեղանական կենտրոնական մարմնի կողմից հրատարակված «Ա.Շահմուրատեանի յոթելեանը» հաղորդագրության մեջ մասնավորապես նշված էր, որ մեկ ամիս առաջ փարիզահայ մամուլի, մշակութային միությունների և գրողների միջև խորհրդակցության ժամանակ որոշվեց արժանավայել տոնել տաղանդավոր երգիչ Արմենակ Շահմուրադյանի հորեղանը: «Այս յարգանքի ցոյցը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Մայիս 7ի Կիրակի օր, կեսօրէ վերջ ժամը Յին Սալ Կավոյի մէջ: Շահմուրատեան անունը անբաժան մասնիկն է Կոմիտասեան արուեստին: Մին կերտեց, միւսն ալ զայն տարածեց: Տօնելով Շահմուրատեանի արուեստը, մենք, անգամ մը ես մեր պաշտամունքը արտաբերած կ'ըլլանք հայ ազգային մեծափառ երաժշտութեան հանդէպ»<sup>49</sup>: Հորեղանական հանդեսին անդրադառնում է «Ապագան» իր «Արուեստագէտի տօնը» հոդվածում. «Այսօր Ա. Շահ Մուրատեան փակուած է արուարձանի մը անկիւնը, իր ընտանիքին եւ բարեկամներու անձնւէր խնամքներուն առարկայ, բայց զուրկ նիւթական բաւարար միջոցներէ:

Տիկին Շահ Մուրատեանի դիմումին ընդառաջ երթալով փարիզահայ մամուլը եւ մշակութային միութիւններ մէկ քանի խորհրդակցութենէ վերջ որոշեցին կազմակերպել կիրակի օրուան յարգանքի ցոյցը, որ կարելի է ըսել թէ իր գտած ընդունելութեամբ պիտի կարենայ մասամբ նպաստակին ծառայել: Հանդէսին յայտագիրը կազմուած էր երկու մասերէ, ուղերձներ եւ զեղարուեստական բաժին: Զանազան բանախօսութիւններէ ետք տեղի ունեցաւ զեղարուեստական բաժինը որուն կը մասնակցէին փարիզահայ սիրուած եւ տաղանդաւոր արուեստագէտներ: Յիշենք անոնցմէ օրը. Գոհարիկ Ղազարոսեանին (դաշնակ), Իրիս Պիլպիլեան (երգ), Պ. Պ. Ֆիլիփ Արզարեան (ջութակ), ժուան Նազարեանին (դաշնակ) եւ Ն. Մարգարեան (արտասանութիւն), ինչպէս նաեւ տիկ. Գեւորեան՝ որ իր փափաքով երգեց Տարօնի ժողովրդական երգերը: Ունկնդրուեցան Շահ Մուրատեանի սկաւառակները եւ համերգը փակուեցաւ Սիփան-Կոմիտաս երգչախմբի մեկ քանի երգերով ղեկավարութեամբ Պ. Ա. Պարթեւեանի»<sup>50</sup>:

Մեզ մնում է եզրակացնել, որ զեկուցումը Մ.Բաբայանը կարդացել է հենց այդ հանդէսի առաջին բաժնում: Դա են վկայում նաև բանախոսի հետևյալ խոսքերը. «... մարթենք բոլորս Արմենակ Շահմուրատեանին հոգեկան հանգստութիւն և առողջութիւն, որ իրեն այնքան կարևոր է»<sup>51</sup>: Կարծում ենք, որ Ա.Շահմուրադյանի մասին Մ.Բաբայանի այս հուշերը, մտնելով գիտական շրջանառության մեջ, կլրացնեն օպերային առաջին հայ երգչի մասին մեր պատկերացումները:

### **2.2.3. Մարգարիտ Բաբայանը՝ Գոհարիկ Ղազարոսյանի մասին**

«Գոհարիկ Ղազարոսյանի մահվան լուրը ինձ շատ վշտացրեց: Նա դեռ շատ եռանդուն և կորովի անձնավորություն էր... օժտված էր մեծ տաղանդով և մեծ վարպետությամբ: Եթե նա ապրեր Սովետական Հայաստանում, ԱԱՌ-Մ-

<sup>49</sup> Ա.Շահմուրատեանի յոթելեանը, ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N 316:

<sup>50</sup> Արուեստագէտի տօնը, ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N 316:

<sup>51</sup> Հուշեր Ա.Շահմուրադյանի մասին, զեկուցում Շահմուրադյանի հետմահու հորեղանի աղթով, ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N 231:

ում, կլիներ ճանաչված ու հարգված կոմպոզիտոր: Նա, անկասկած, հանրապետության ժողովրդական արտիստուհի կլիներ: Շատ ափսոս, որ նա այդքան վաղ հեռացավ կյանքից: Այնուամենայնիվ ես հասցրի նրա հետ ծանոթանալ ու զրուցել: Նրա դաշնամուրային պրեյլուդները և էտյուդները հիանալի, առաջնակարգ գործեր են...»<sup>52</sup>: Այս տողերի հեղինակն է Արամ Խաչատրյանը: Իսկ խոսքը պոլսահայ կոմպոզիտոր և դաշնակահար, վաղամեծիկ Գոհարիկ Ղազարոսյանի (1911, Կ.Պոլիս – 28.10.1957, Փարիզ) մասին է:

Քննության առնելով Գ.Ղազարոսյանի մասին Մ.Բաբայանի հոդվածները, մենք տեղեկություններ ենք ստանում Գ.Ղազարոսյանի թե՛ համերգային և թե՛ ստեղծագործական գործունեության մասին<sup>53</sup>: Վերջում ներկայացվել են Մ.Բաբայանի ֆոնդում գտնվող նրան հասցեագրված Գ.Ղազարոսյանի երկու նամակները<sup>54</sup>, որոնք գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ:

#### **2.2.4. Մարգարիտ Բաբայանը՝ Օննիկ Պերպերյանի մասին**

1959-ին 71 տարեկանում կյանքից հեռանում է հայ կոմպոզիտոր, դիրիժոր Օննիկ Պերպերյանը (11.11.1888, Կ.Պոլիս – 1959, Փարիզ): «Օննիկ Պերպերեանի վաղաժամ եւ անսպասելի կորուստը ոչ միայն հայ, այլ ընդհանուր գեղարուեստին համար ինծի առիթ կուտայ խօսելու իր երաժշտական գործին մասին»<sup>55</sup>: «Օննիկ Պերպերեանի գործը» հոդվածում երաժշտագետն անդրադառնում է Պերպերյանի փարիզյան վերջին սիմֆոնիկ համերգին, որը տեղի էր ունեցել 1956թ. նոյեմբերի 8-ին Սալ Գավոյի սրահում: Մ.Բաբայանի մյուս անդրադարձը Օ.Պերպերյանի գործունեությանը «Հայկական եկեղեցական երաժշտութիւնը եւ Պ.Օննիկ Պերպերեանը» հոդվածն է, որտեղ նա գրում է. «Փարիզի հայ հասարակութիւնը եւ Եւրոպայի գեղարուեստի պիրահարները մի արտակարգ երաժշտական հանդէս պիտի վայելէն հինգշաբթի երեկոյ, դեկտ. 29ին, Սալ Կավօի ընդարձակ սրահում: Այդ երեկոն նուիրում Կիտի լինի գլխատրապէս հայ եկեղեցական երաժշտութեանը, որ առաջին անգամ, Կիտի ներկայացուի իբրեւ եկեղեցական նուագահանդէս, ինչպէս Բախի, Հենդելի եւ ուրիշ աշխարհահռչակ մեծ երաժիշտների oratorio-ները կամ պատարագները (messe) կը կատարուին: Այդ գործը գլուխ բերած է Պ.Օննիկ Պերպերեանը, որ այդ իրիկունը հայ տոհմիկ եկեղեցական երաժշտութիւնը իր ամբողջ զմայելի գեղեցկութեամբ ի ցոյց պիտի հանէ, օգտուելով Եւրոպական ներդաշնակութիւնների հարստութիւնից, միեւնոյն ժամանակ պահպանելով եւ ձուլելով զանոնք մեր երաժշտութեան հոգուն համաձայն»<sup>56</sup>:

#### **2.2.5. Մարգարիտ Բաբայանը՝ Արա Պարթևյանի մասին**

1924-ին Փարիզում է հաստատվում հայ կոմպոզիտոր, դիրիժոր և

<sup>52</sup> **Քրուտեան Յ.**, Հայ երաժշտութեան աշխարհասփիտ ընծիւղները, էջ 38:

<sup>53</sup> Տե՛ս **Բաբայեան Մ.**, Գոհարիկ Ղազարոսեանի նուագահանդէսը, «Յառաջ», 8 դեկտեմբերի 1949: **Babaian M.**, Le concert de la pianiste Koharik Gazarossian, Կորսուկներ, ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N 234-1: **Բաբայեան Մ.**, Գոհարիկ Ղազարոսեան, «Այօր», 27 մարտի 1953: **Բաբայեան Մ.**, Գոհարիկ Ղազարոսեան. երկրորդ նուագահանդէսը, ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N 234-2:

<sup>54</sup> ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N 112:

<sup>55</sup> **Բաբայեան Մ.**, Օննիկ Պերպերեանի գործը, 8 հոկտեմբերի, 1959, ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N 234 -1:

<sup>56</sup> **Բաբայեան Մարգարիտ**, Հայկական եկեղեցական երաժշտութիւնը եւ Պ. Օննիկ Պերպերեանը, ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N 234-1:

խմբավար Արա Պարթևյանը: 1952թ. փետրվարի 24-ին Սորբոնի մեծ ամֆիթատրոնում տեղի է ունենում Կոմիտասի գործերին նվիրված համերգը, որը կազմակերպել էր Արա Պարթևյանը՝ «շատ շքեղ յայտագրով. Փարիզի հայկական խումբը իր ղեկավարությամբ, չորս երգիչներ. Օր. Օր. Հայկանուշ Թորոսեան, Իրիս Պիլպիլեան, Պ. Պ. Խաչիկ Նշանեան եւ Անդրանիկ Խախամեան, թաւ-ջութակ՝ Պ. Պիեռ Լաբադի, սրինգ՝ Պ. Կաստանիեր: Յերեկոյթը կը նախագահէր Պ. Լի Լիօնկուր, Սեզար Ֆրանկ երաժշտանոցի տեսուչը, որ մի քանի խոսք նուիրեց Կոմիտաս Վ.ի գործին եւ այն մեծ աշխատանքին, որ Պ. Արա Պարթևեանը կատարած էր այդպիսի դժուարագին գործը իրագործելու, իսկ Պ. Ֆելիքս Բոժել, փոխնախագահ ֆրանս. «միզիքոլոժի» ընկերութեան, փառաբանեց անմահ վարդապետին մեծ դերը, որ նա կատարած է հայ երաժշտութեան վերաբերեալ: Երգեցիկ խումբը երեք կրոնական կտորներ ներկայացուց եւ տասնչորս ժողովրդական երգեր առանց ոեւէ գործիքի օգնութեան եւ գովելի է այնքան ճիշդ, անսխալ երգուածը, բացի վերջին՝ Սիփանայ քաջերը: Փոքրիկ օտլո կտորների մէջ Օր. Օր. Քիսեան եւ Պենեկեան սիրուն, քաղցր ձայնով կատարեցին իրենց մեներգները»<sup>57</sup>: Համերգի ընթացքում Օրիորդ Տիրուհի Ջառափյանի կատարմամբ հնչում է Կոմիտասի «Վեց պարը»:

Մ.Բաբայանի շնորհիվ պահպանվել են տեղեկություններ առ այն, որ «մեր պատական երաժշտապետ եւ ղեկավար» Ա.Պարթևյանի նախաձեռնությամբ փետրվարի 25-ին Սորբոնի մեծ ամֆիթատրոնում տեղի է ունեցել ցերեկույթ, նվիրված Ալեքսանդր Սպենդիարյանի, Ռոմանոս Մելիքյանի և Գրիգոր Սյունիի հիշատակին<sup>58</sup>: Իսկ 1953թ. օգոստոսի 1-ին Մ.Բաբայանը գրում է. «Քարիզի Հայկական երգչախումբը շատ գեղեցիկ գաղափարը ունեցաւ իր ղեկավար Արայ Պարթևեանի անձնական երաժշտական գործերը ներկայացնել հայ գաղութին և երաժշտաւեր հասարակութեան: Երեկոյթը կայացաւ Պլէյիլ-Շոպէնի դահլիճում Հունիսի 25ին ժամը 21ին մասնակցութեամբ շատ յայտնի երաժիշտների և երգիչների»<sup>59</sup>:

### ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

### ՄԱՐԳԱՐԻՏ ԲԱԲԱՅԱՆԸ ԵՎ ԿՈՄԻՏԱՍԸ

Մ.Բաբայանի մասնագիտական կողմնորոշման գործում բախտորոշ էր նրա և Կոմիտասի առաջին հանդիպումը 1902-ին. Մ.Բաբայանը հասկանում է, «թէ հայ երաժշտութիւն էլ կայ աշխարհիս երեսին և այդ գաղափարը կապուեցաւ Կոմիտաս վարդապետի երաժշտական անձի հետ»<sup>60</sup>: Մ.Բաբայանը Կոմիտասին քաջալերող խորհրդատուն ու քննադատն էր: Լինելով Փարիզի կոմիտասյան հանձնաժողովի փոխնախագահ, իսկ Արշակ Չոպանյանի մահից հետո՝ նախագահ, նա է կորստից փրկել ու Հայաստան ուղարկել Կոմիտասի ձեռագրերը:

### 3.1. Մարգարիտ Բաբայանը՝ Կոմիտասի մասին

«Տպաւորութիւններ Կոմիտաս վարդ.ի անձին ու գործին շուրջ»

<sup>57</sup> **Բաբայան Մ.**, Կոմիտասեան օրը, «Այսօր», 4 մարտի 1952:

<sup>58</sup> Տե՛ս **Բաբայան Մ.**, Երեք հայ երաժշտագետների յիշատակին նուիրած ցերեկոյթը, ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N234-2:

<sup>59</sup> **Բաբայան Մ.**, Քարիզի հայ երաժիշտների յաջողութիւնը, «Քույս», 1 օգոստոսի 1953:

<sup>60</sup> **Բաբայան Մ.**, Տպաւորութիւններ Կոմիտաս վարդ.ի անձին ու գործին շուրջ, Նավասարդ գրական եւ գեղարուեստական Տարեգիրք, Ա., կազմեցին Դանիէլ Վարուժան եւ Յ.Ճ.Սիրունի, 1914 – Կ.Պոլիս, էջ 304:

հողվածում Մ.Բաբայանը համառոտ ներկայացնում է Կոմիտասի կենսագրությունը, անդրադառնում իրենց առաջին հանդիպմանը 1902-ին Թիֆլիսում, հետաքրքիր մանրամասներ ներկայացնում 1906թ. դեկտեմբերի 1-ի համերգի նախապատրաստական աշխատանքների մասին ևն<sup>61</sup>:

Կոմիտասագիտության մեջ կարևոր նշանակություն ունեցավ Կոմիտասի մահից հետո տպագրված «Կոմիտաս Վարդապետ իր նամակների միջոցով» հոդվածը<sup>62</sup>, որը եզրափակվում է հետևյալ տողերով՝ «Նա (Կոմիտաս – Ն.Կ.) առաջին մեծ ստեղծագործողն եղաւ մեր ժողովրդական ու հոգեւոր երաժշտութեան: Այդ գերմարդկային աշխատութիւնը քայքայեց մեր հայրենիքի ջրվէժներին նման վիթխարի այդ ֆիզիքական ու հոգեկան ուժը, աքսորի հրէշային տեսիլները ընդմիշտ խորտակեցին այդ աննման, բարձր ու նուրբ էակի հոգին և հայոց նորաբողբոջ գեղարուեստի լուսաւոր Աստղը խաւարեց յաւիտեան»<sup>63</sup>: Հոդվածում Մ.Բաբայանը ներկայացնում է կենսագրական շատ կարևոր տվյալներ՝ անդրադառնալով նաև Կոմիտասի ուսումնառությանը, որի ընթացքում նա «բացառապէս տարուած էր երաժշտութեամբ, ճայնական հնչիւններով և իր վարժապետները հասկանալով ու յարգելով նրա անօրինակ երաժշտական խառնուածքը, ներողամիտ էին վարուում դէպի նրան»<sup>64</sup>: Այնուհետև երաժշտագետն անդրադառնում է Կոմիտասի երաժշտական գործունեությանը: Շարունակելով Կոմիտասի գործունեության վերլուծությունը՝ Մ.Բաբայանը գրում է. «Թէ ինչ վիթխարի գործ կատարեց Կոմիտաս Վարդապետը Պոլիսի մէջ, այդ մի ամբողջ հատորի նիւթ կարող է լինել... Նա իր վերջին գերմարդկային ուժը տուաւ Փարիզ 1914 թուի յունիս ամսին Միջազգային երաժշտագետների համագումարին: Նա ներկայացաւ իբրև անբաղդատելի երգիչ, նուագող, շաւալի, դասախօս, երաժշտագէտ, երգահան, դեկավար խմբի, պատարագիչ և բառի բուն նշանակութեամբ ապշեցուց համագումարի ամենամեծ երաժշտագետներին, որոնք մոռանալ չէին կարող նրան: Իբրև վկայ և մասնակցող այդ երաժշտական ներկայացումներին կարող եմ հաստատել, որ ամենամեծ յաջողութիւնը ունեցաւ հայոց երաժշտութիւնը շնորհիւ մեր քանքարաւոր երաժշտի: Թէ ո՛րչափ մեծ տպաւորութիւն էր թողած Կոմիտաս Վարդապետը այդ օտարազգի երաժիշտների վրայ մի ապացոյց կարող է լինել պրօֆ. Կուրտ Սաքսի ճառը, Վարդապետի յուղարկաւորութեան, 27 հոկտեմբեր, 1935»<sup>65</sup>: Մ.Բաբայանի այս հոդվածի շնորհիվ պահպանվել է Կուրտ Ջաքսի դամբանականի տեքստը՝ Կոմիտասի մահվան կապակցությամբ: Արժեքավոր են Մ.Բաբայանի «Յուշեր Կոմիտաս Վարդապետի 1-ին Փարիզում»<sup>66</sup>, որ գրվել է 1946թ. դեկտեմբերի 1-ին Փարիզում:

### **3.2. Մարգարիտ Բաբայանի և Կոմիտասի նամակագրությունը** Ծավալուն ու արժեքավոր է Կոմիտասի և Մ.Բաբայանի<sup>67</sup>

<sup>61</sup> Բաբայան Մ., Տպաւորութիւններ Կոմիտաս վարդի անձին ու գործին շուրջ, էջ 302-306:

<sup>62</sup> Բաբայան Մ., Կոմիտաս Վարդապետ իր նամակների միջոցով, «Մշակոյթ», Փարիզ, 1935, N 3-4, էջ 153-165:

<sup>63</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 165:

<sup>64</sup> Նույն տեղում, էջ 154:

<sup>65</sup> Նույն տեղում, էջ 164:

<sup>66</sup> Յուշեր Կոմիտաս Վարդապետի շուրջ, ԳԱԹ, Մ.Բ.Ֆ., N 224:

<sup>67</sup> Իր ստեղծագործական երկարատև կյանքի ընթացքում Մարգարիտ Բաբայանը նամակագրություն է ունեցել Նիկողայոս Տիգրանյանի, Մուշեղ Աղայանի, Ռուբեն Ջաղայանի, Գառնիկ Ստեփանյանի, Ռոբերտ Աթայանի, Շուշանիկ Ափոյանի, Հարո Ստեփանյանի, Շուշանիկ Բաբայան-Լալոյայի, Արշակ

նամակագրությունը: Կոմիտասի՝ իրեն հասցեագրված նամակներից ծավալուն հատվածներ Մ.Բաբայանը հրատարակել է Փարիզում՝ 1935-ին լույս տեսած իր «Կոմիտաս Վարդապետ իր նամակների միջով» հոդվածում<sup>68</sup>:

Կոմիտասի և Մ.Բաբայանի նամակագրությունն ընդգրկում է 1905-1914 թվականները: Կոմիտասը բարձր է գնահատել Մ.Բաբայանի գործունեությունը: Արդեն 1912-ին նա նկատել է. «Ուրախ եմ, որ դուն էլ գոհ ես քու աշակերտներից ու ահագին գործ ես կատարում. արդէն իսկ քեզ ճանաչեցին Փարիզում, այս մի մեծ ու ուժեղ գրասական է գործերիդ յաջողութեանը համար, եւ որ գլխաւորն է, ապագադ պայծառացաւ ու մի ընդարձակ տեղ գրաւեցիր հայ երաժշտութեան պատմութեան մէջ քո աննկուն ու եռանդուն աշխատութեամբդ. օտարութեան մէջ, ուր քեզ աւելի՛ են հասկանում, քան քու հայրենիքումը...»<sup>69</sup>:

Թեև Կոմիտասն իր նամակագրության մեջ զուսպ է ու ինքնամփոփ, այդուամենայնիվ՝ Մ.Բաբայանին ուղղված նամակներում դրսևորվում է նրա հետաքրքրությունների բազմակողմանիությունը, մտքի սրությունն ու անկախությունը, կենդանի ու նուրբ դիտողականությունը, շրջապատող աշխարհի հանդէպ վերին աստիճանի զգայուն վերաբերմունքը: Նամակները բացահայտում են «այդ անզուգական անձի հոգին՝ մերթ թախծագին և ալեկոծ ծով, յաճախ վիրաւորուած սիրտ, մերթ աննկական զուարթութիւն, անսահման բարութիւն և մարդասիրութիւն, մանաւանդ ոգևորութիւն, յոյս, ու անվերջ ու անխոնջ աշխատասիրութիւն»<sup>70</sup>: Մ.Բաբայանին հասցեագրած իր առաջին նամակը Կոմիտասը գրել է 1905թ. հունիսի 25-ին Էջմիածնից, իսկ վերջինը՝ 1914թ. հունիսի 23-ին՝ Փարիզից: Ինչ վերաբերում է Մ.Բաբայանի՝ Կոմիտասին ուղղված նամակներին, ապա դրանցից պահպանվել են ընդամենը վեցը. գրվել են դրանք 1910թ. մայիսի 15-20 Լոնդոնից, 1911թ. հոկտեմբերի 18-ին Փարիզից, 1912թ. հուլիսի 21-ին Փարիզից, 1912թ. հուլիսի 23-ին Փարիզից, 1912թ. նոյեմբերի 3-ին Ժնևից և 1913թ. ապրիլի 10-ին Փարիզից:

Կոմիտասի և Մ.Բաբայանի նամակագրության ուսումնասիրությունը ցույց տվեց հետևյալը:

➤ Ցավոք, նամակագրությունն ամբողջությամբ չի պահպանվել, թերի է, բացակայում են մի շարք նամակներ, որոնց մասին տեղեկանում ենք այլ նամակներից:

➤ Նամակներից «առաջին ձեռքից» տեղեկություններն ենք ստանում Կոմիտասի գործունեության վերաբերյալ. նա պատմում է առաջիկա ու հեռանկարային ծրագրերի, տեղի ունեցած համերգների, դասախոսությունների և ստեղծագործական աշխատանքների մասին:

➤ Նամակներում ուրվագծվում են Կոմիտասի գեղագիտական հայացքները, ձևակերպվում հայ երաժշտության վերաբերյալ նրա տեսակետները:

➤ Հայտնի է, որ Կոմիտասի գրական ժառանգության կարևոր մասն են նրա մի քանի տասնյակ բանաստեղծությունները, որոնք նրա կյանքի օրոք

---

2ուպանյանի, Վարդան Սարգսյանի, Գոհարիկ Ղազարոսյանի, Մաղաքիա արք. Օրմանյանի, Պոլինա Վիարդոյի, Կ.Դեթյունի, Մ.Ռավելի, Ռ.Դյուկասի, Վ.դ'Էնդիի, Լ.Լալուայի, Պ.Կազալսի, Մ.Ռե Բալայի, Կ.Բալմոնտի, Ա.Զերեպինի և էլի շատ ու շատ երաժիշտների ու մտավորականների հետ:

<sup>68</sup> Տե՛ս **Բաբայան Մ.**, Կոմիտաս Վարդապետ իր նամակների միջով, «Մշակոյթ», Փարիզ, 1935, N 3-4, էջ 153-165:

<sup>69</sup> Կոմիտաս Վարդապետ, Նամակնի, Երևան, 2009, էջ 210:

<sup>70</sup> Տե՛ս **Բաբայան Մ.**, Կոմիտաս Վարդապետ իր նամակների միջով, էջ 165:

չեն տպագրվել: Մ.Բաբայանին հասցեագրված նամակներից մեկում Կոմիտասը գետեղել է մի բանաստեղծություն:

➤ Նամակներում հառնում է Կոմիտասի պարզ ու անմիջական, սրամիտ ու մարդանոտ կերպարը:

### **3.3. Մարգարիտ Բաբայանը և Կոմիտասի Երկերի Ժողովածուի ակադեմիական հրատարակությունը**

Մեր պրպատումների ընթացքում հայտնաբերված և գիտական շրջանառության մեջ դրված նամակները բացահայտում են այն մեծ դերը, որն ունեցել է Մ.Բաբայանը Կոմիտասի Երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության գործում (խոսքը Կոմիտասի ձեռագրերը Երևան փոխադրելու մասին է), որն իրականացրեց ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը:

#### **ԵՃՐԱԿԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Առենախոսության մեջ առաջին անգամ ներկայացվել է Մ.Բաբայանի կատարողական և երաժշտական-քննադատական վաստակը, քննության առնվել երգչուհի Մ.Բաբայանի կատարողական արվեստը՝ նրա համերգային գործունեությունը՝ ինչպես Թիֆլիսում, այնպես էլ Փարիզում, եվրոպական այլ երկրներում: Ուսումնասիրվել է Մ.Բաբայանի երաժշտական-քննադատական գործունեությունը: Անդրադարձ է կատարվել Կոմիտաս-Բաբայան մարդկային և ստեղծագործական շփումներին, լուսաբանվել է Մ.Բաբայանի դերը Կոմիտասի ժառանգության պահպանման, Կոմիտասի ստեղծագործության հանրահռչակման, ինչպես նաև Կոմիտասի ժառանգության ակադեմիական հրատարակության իրականացման գործում:

Գիտական շրջանառության մեջ են դրվել արխիվային մի շարք վավերագրեր, այդ թվում՝ Մարգարիտ Բաբայանի հուշերը Արմենակ Շահմուրադյանի մասին՝ նրա զեկուցումը երգչի հետմահու հոբելյանի կապակցությամբ, Մ.Բաբայանին հասցեագրված Գոհարիկ Ղազարոսյանի երկու (1961-1962թթ.) և Յիցիլիա Բրուտյանի մեկ (1957թ.) նամակները, ինչպես նաև Ռոբերտ Աթայանի տասներեք (1960-1963թթ.), Գառնիկ Ստեփանյանի երկու (1961), Ռուբեն Ջարյանի և Մաթևոս Մուրադյանի երեք (1955-1956թթ.) նամակները, որոնցում ուրվագծվում է, թե ինչպես է հավաքվել Կոմիտասի արխիվը Երևանում և ինչպես են իրականացվել աշխատանքները Կոմիտասի Երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության ուղղությամբ:

Ուսումնասիրվել է երաժշտագետի երաժշտական-քննադատական ժառանգությունը: Մասնավորապես՝ ներկայացվել են նրա հոդվածները խորհրդահայ կոմպոզիտորների՝ այդ թվում՝ Անոն Բաբաջանյանի, ինչպես նաև սփյուռքահայ երաժշտության գործիչներ Արմենակ Շահմուրադյանի, Գոհարիկ Ղազարոսյանի, Օննիկ Պերպերյանի և Արա Պարթևյանի վերաբերյալ:

Բացահայտվել է այն մեծ դերը, որն ունեցել է Մ.Բաբայանը Կոմիտասի Երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության գործում (խոսքը Կոմիտասի ձեռագրերը Երևան փոխադրելու մասին է), որն իրականացրել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը (1960-2006): Կազմվել է Մ.Բաբայանի երաժշտական-քննադատական հոդվածների ցանկը, ամբողջացվել Մ.Բաբայանի մասին եղած մատենագիտական ցանկը:

#### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. **Կոստանդյան Ն.**, Մարգարիտ Բաբայանը Արմենակ Շահմուրադյանի մասին, Կանթեղ. գիտական հոդվածներ, 2015, 4 (65), էջ 210-218:

2. **Կոստանդյան Ն.**, Մարգարիտ Բաբայանը և Կոմիտասի Երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակությունը, Կանթեղ. գիտական հոդվածներ, 2016, 1 (66), էջ 219-233:
3. **Կոստանդյան Ն.**, Մարգարիտ Բաբայանի գործունեության թիֆլիսյան շրջանը, Կանթեղ. գիտական հոդվածներ, 2016, 4 (69), էջ 204-210:

### **КОСТАНДЯН НИКОЛАЙ АЛЕКСАНДРОВИЧ**

### **МАРГАРИТ БАБАЯН И АРМЯНСКОЕ МУЗЫКАЛЬНОЕ ИСКУССТВО**

Диссертация посвящена исполнительской и музыкально-критической деятельности армянской пианистки, певицы (меццо-сопрано), музыковеда и педагога Маргарит Бабаян (1874-1968).

Поставлены следующие задачи:

- проанализировать исполнительское искусство певицы М. Бабаян, ее концертную деятельность;
- изучить музыкально-критическую деятельность музыковеда М. Бабаян;
- обратиться к личным и творческим контактам Комитаса и М. Бабаян, дать оценку роли М. Бабаян в деле популяризации произведений Комитаса в Армении и в мире и в осуществлении академического издания творческого наследия композитора.

Научная новизна диссертации состоит в следующем:

- Введен в научный оборот ряд архивных документов, в том числе: воспоминания Маргарит Бабаян об Арменаке Шахмурадяне; выступление в связи с посмертным юбилеем певца; адресованные М. Бабаян 2 письма (1961-1962) от Гоарик Газаросян и 1 письмо от Цицилии Брутян (1957), 13 писем от Роберта Атаяна (1960-1963), 2 – от Гарника Степаняна, а также от Рубена Заряна и Матевоса Мурадяна. Письма проливают свет на то, как создавался архив Комитаса в Ереване и как осуществлялись работы по опубликованию академического собрания сочинений композитора.

➤ Исследовано музыкально-критическое наследие музыковеда. Представлены, в частности, статьи о творчестве советских армянских композиторов, в том числе Арно Бабаджаняна, и выдающихся зарубежных армянских музыкальных деятелей Арменака Шахмурадяна, Гоарик Газаросян, Онника Перперяна и Ара Партевяна.

➤ Дана оценка роли Маргарит Бабаян в осуществлении академического издания произведений Комитаса (речь идет о перевозке рукописей Комитаса в Ереван) Институтом искусств НАН РА (1960-2006).

➤ Составлен библиографический список музыкально-критических статей М. Бабаян.

➤ Пополнен библиографический список документов о М. Бабаян.

Материалом для исследовательской работы служила имеющаяся в наличии музыковедческая литература о М. Бабаян, отзывы о ней в прессе того времени, эпистолярное наследие и статьи, а также программы концертов с участием певицы.

Диссертация состоит из введения, трех глав (Глава первая – “Тифлисский период деятельности Маргарит Бабаян”, Глава вторая – “Парижский период деятельности Маргарит Бабаян”, Глава третья – “Маргарит Бабаян и Комитас”, заключения и списка использованной литературы.

Результаты исследований выявили следующее:

#### **Исполнительская деятельность:**

➤ М. Бабаян первой выступила в Париже с исполнением французских, греческих, русских и армянских народных песен; она исполняла также испанские, еврейские и баскские народные песни.

➤ Специально для нее были написаны “Дзайн тур, ов тзовак [Отзовись, о озеро]”, “Ахчи, мер’д мерел а [Горе матушке твоей, девица]”, “Ахчи, анун’д Шушан [Девушка по имени Шушан]” Комитаса, и “Tripatos” Равеля.

#### **Музыкально-критическая деятельность:**

➤ Высоко профессиональные статьи, написанные М. Бабаян, содержат редкие сведения о композиторах и исполнителях и являются весомым вкладом в армянское музыковедение.

➤ Начав музыковедческую деятельность в 21 год (в 1895 г.), печатаясь в кавказской прессе (“Ардзаганк [Эхо]”, “Мшак [Труженик]”, “Кавказ” и “Новое обозрение”, М. Бабаян становится летописцем музыкальной жизни Тифлиса. Благодаря ее рецензиям читатель проникается атмосферой и ощущает музыкальный пульс Тифлиса конца 19го – начала 20го века.

➤ Печатаясь во французской и зарубежной армянской прессе (“Le monde musicale”, “La revue musicale”, “Il Corriere Musicale”, а также “Арадж [Вперед]”, “Апага [Будущее]”, “Кулисы”, “Мшакуйт [Культура]”, “Айсор [Сегодня]” и “Анаит”), М. Бабаян способствовала популяризации армянской музыки в мире. М. Бабаян распознала талант молодых армянских музыкантов Беглара Амирджаняна, Арно Бабаджаняна, Гоарик Газаросян и предсказала им блестящее музыкальное будущее.

➤ М. Бабаян первой среди армянских музыковедов подвергла творческому анализу исполнительское искусство зарубежных армянских музыкантов Арменака Шахмурадяна, Гоарик Газаросян, Онника Перперяна и Ара Партевяна.

#### **Комитасоведение:**

➤ В статьях о Комитасе (“Впечатления о личности и творчестве Вардапета Комитаса” [1914], “Вардапет Комитас в письмах” [1935], “Воспоминания о Вардапете Комитасе” [1946]) не только прослежен жизненный путь вардапета, но и проведен анализ его творчества. Письма Комитаса, адресованные М. Бабаян, представляют собой большую ценность, с одной стороны, как источник, выявляющий эстетические взгляды и творческие принципы Комитаса, и с другой – как достоверные, незаменимые документы, проливающие свет на отдельные эпизоды и факты жизни и творчества великого музыканта.

➤ Усилиями М. Бабаян в Ереван был перевезен архив Комитаса, что

сделало возможным издание Сборника произведений Комитаса в 14 томах (Институт искусств НАН РА, 1960-2006). Тем самым творчество Комитаса стало доступным музыкантам-исполнителям.

## **NIKOLAY KOSTANDYAN** **MARGARIT BABAYAN AND ARMENIAN MUSICAL ART**

The thesis analyzes the Armenian musician Margarit Babayan's (1874-1968) activity as a pianist, singer (mezzo-soprano), music critic and pedagogue.

The following tasks have been set:

- To analyze the singer M. Babayan's performing art and her concert activity;
- To study M. Babayan's activity as music critic;
- To address the personal and creative contacts of Komitas and M. Babayan, to assess M. Babayan's role in the popularization of Komitas' oeuvre in Armenia and worldwide, as well as in the realization of the academic publishing of the composer's creative legacy.

The scientific novelty of the thesis is as follows:

- A number of archive documents, such as: Margarit Babayan's recollections about the singer Armenak Shahmuradyan; her presentation on the occasion of the latter's posthumous birthday anniversary; letters addressed to M. Babayan: 2 (1961-1962) from Goharik Ghazarosyan (1961-1962), 1 (1957) – from Cecilia Brutyan, 13 (1960-1963) – from Robert Atayan, 2 – from Garnik Stepanyan, as well as letters from Ruben Zaryan and Matevos Muradyan – are firstly introduced to the academic circles. These documents shed light on how Komitas' archive was collected in Yerevan, and how the work toward publishing the academic collection of the composer's oeuvre was accomplished.

- Margarit Babayan's musical-critical legacy is examined. In particular, the critic's articles about the creativity of the Soviet Armenian composers, including Arno Babajanyan, and the renowned diasporan Armenian musicians Armenak Shahmuradyan, Goharik Ghazarosyan, Onnik Perperyan and Ara Partevyan, are presented.

- Margarit Babayan's efforts are evaluated toward the implementation of the academic publishing of Komitas' works (the transportation of Komitas' manuscripts to Yerevan is meant) by NAS RA Institute of Arts (1960-2006).

- The bibliography of M. Babayan's musical critical articles is compiled.

- The bibliography of documents about M. Babayan is completed.

The research work is conducted based on the available musical critical literature about M. Babayan, on the press coverage of the time, the letters and articles, as well as on the programs of concerts with her participation.

The thesis includes an Introduction, three Chapters (Chapter 1 – “The Tiflis Period of Margarit Babayan’s Career”, Chapter 2 – “The Paris Period of Margarit Babayan’s Career”, Chapter 3 – “Margarit Babayan and Komitas”, Conclusions and Bibliographic References.

The results of the research work are stated below.

**Performing activity:**

➤ M. Babayan was the first to perform in Paris French, Greek, Russian and Armenian folk songs; she also performed Spanish, Jewish and Basque folk songs.

➤ Some works were composed specially for her, among them: “Dzain tur, of tzovak [Respond me, oh the Lake]”, “Aghji, mer’d merel a [Woe to Your Mother, Girl]”, “Aghji, anun’d Shushan [You Girl, Shushan by Name]” by Komitas, and “Tripatos” by Ravel.

**Musical-critical activity:**

➤ The highly professional articles authored by M. Babayan contain exclusive information about composers and performers, thereby constituting an enduring asset to Armenian musical criticism.

➤ Having started her musical critical career at the age of 21 (in 1895) and contributing to the Caucasus print media (“Ardzaganq [Echo]”, “Mshak [Laborer]”, “The Caucasus” and “Novoe Obozrenie [New Revue]”, M. Babayan becomes the chronicler of the musical life in Tiflis. Thanks to her critique, the reader feels the musical pulse of Tiflis of the late 19<sup>th</sup> – early 20<sup>th</sup> century and is imbued with its atmosphere.

➤ M. Babayan also contributed to the French and diasporan Armenian press (“Le monde musicale”, “La revue musicale”, “Il Corriere Musicale”, as well as “Haraj [Forward]”, “Apaga [The Future]”, “Kulis [Behind the Stage]”, “Mshakuit [Culture]”, “Aysor [Today]” and “Anahit”), thereby promoting Armenian music worldwide. M. Babayan recognized the talents of the young musicians Beglar Amirjanyan, Arno Babajanyan, Goharik Ghazarosyan, and foretold their brilliant musical career.

➤ M. Babayan was the first among Armenian music critics to study the performing art of the diasporan Armenian musicians Armenak Shahmuradyan, Goharik Ghazarosyan, Onnik Perperyan and Ara Partevyan.

**Komitas Studies:**

➤ Her articles about Komitas (*Impressions about the Personality and Oeuvre of Vardapet Komitas* [1914], *Vardapet Komitas in His Letters* [1935], *Memories of Vardapet Komitas* [1946]) not only outline his path of life, but also examine his work. Komitas’ letters to M. Babayan are very valuable, firstly, because they help understand his aesthetic views and creative principles, and, secondly, because they are authentic and indispensable documents, shedding light on

separate episodes and facts of the life and career of the great musician.

➤ Thanks to M. Babayan's efforts, Komitas' archive was moved to Yerevan. This made it possible to publish the complete Collection of Works by Komitas in 14 volumes (NAS RA Institute of Arts, 1960-2006). Thus, Komitas' oeuvre is now available for music performers.